№ 151 Օգոստոսի 29 (Սեպտեմբերի 10) 1880 Օգոստոսի 29 (Սեպտեմբերի 10) № 151

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիտում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Ռացի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի առաջարկութիւն։—Ներքին տեսութիւն։ «Русскій Курьеръ» լրագրի թղթակցութիւնը։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Մոսկվայից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ «Голосъ» լրագրի թղթակցութիւնը։ Թուրքիա։ Էլզաս-Լոթարինգիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանախօսներ։ Արևելեան Անդրկովկասի ձկնորսութեան ճգնաժամը։

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Աշակերտցի գաղթականների անունով 1877 թուին հաւաքված և մինչև այսօր Էջմիածնի գանձարանում պահված 17,000 ռուբլու մասին քանի մի անգամ խօսվեցաւ մեր լրագրութեան մէջ։ Լրագրութիւնը բացատրութիւն պահանջեց Էջմիածնից, թէ ինչ իրաւունքով, ինչ նպատակով է պահել յիշեալ գումարը իր մօտ, որ ժողովուրդը նուիրել էր իր ժամանակին պաշտպանելու գաղթականներին օգնելու համար։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԶԿՆԱՎԱՃԱՌՈՒԹԵԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

—

Մարտի 18-ին Բարձրագոյն հաստատված կանոնադրութեան զօրութեամբ Արևելեան Անդրկովկասի ջրերում գտնված ձկնորսարանները բաժին բաժին կապալառութեան տալու համար մայիսի 16, 19 և 22-ին Բագու կատարված աճուրդները ունան թողեցին հասարակական ակնկալութիւնը։ Տեղական զլխաւոր վարչութիւնը տեսնելով ամրագրութեան ժամանակ բոլոր ձկնորսական բաժինների համար տրված գումարի անհամեմատութիւնը, արքունի գանձարանի շահերի համար տխրալար և վնասակար համարելով չը հաստատեց այդ աճուրդները, այլ նշանակեց նոր աճուրդ թիֆլիսում նոյեմբ. ամսոյս 19-ին։

Յայտնի է, որ մինչև այժմ այդ բոլոր ձկնորսարանները 1847 թուից սկսած՝ միառեղ տրվում էին մի մարդու կապալառութեամբ։ Այս սկզբունքով թէև արքունի գանձարանը առանց որ և է ծախքի և հոգացողութեան տոհմում էր բաւականին նշանաւոր գումար, բայց ժողովրդական տնտեսութեան ժամանակից պահանջների ճնշմամբ մի քանի հանգամանք մղվում էին տեղւոյս վերին վարչութիւնը երկիւղ կրել այն հետևանքներից, որ բղխում էին այս կարգից, որպէս չարիք և նրանց առաջն առնել։

Գլխաւոր վարչութեան խնամածութիւնը իրագործեցաւ մարտի 18-ին Բարձրագոյն հաստատված կանոնադրութեամբ՝ որի հիման վրա, ինչպէս ասացինք՝ նշանակված էին Բագուի մայիսի աճուրդները։

Թէև նորոգ հաստատվելու կանոնադրութեան և ձկնորսական մենաճաառութեան օրհասի համար վաղուց սպասվել էր հասարակութեան մէջ, բայց որվնետև մի այսպիսի ծանրակշիռ հարց վճռելու համար կարևոր եղած սկզբնական հետազոտութիւնը և կանոնադրութեան խմբագրութիւնը կատարվում էր գլուխական խորհրդաւոր վարչարների տակ և պաշտօնական ֆինանսիստների և տնտեսագէտների հանձարով,—այս պատճառով հասարակութիւնը առաջիկայ ինդրոյ էութեան և նրա լուծման ուղղութեան վրա տեղեկութիւնից զուրկ լինելով կարող չէր մի որոշ դաղափար ունենալ՝ ակնկալված գործի էութեան մասին։ Բնական է, որ այսպիսի անորոշ դրութեան մէջ, մինչդեռ ակնկալութիւնը մեծ ու մեծ է, ոմանք պիտի սպասէին հանդերձեալ բարեկենդանութեան, երբ նրանց սեպհականութեան գրդռի վրա մենաճաառութեան կողմից դրված ծանր հարկից կազատվէին և կը տեսնէին արքունի գանձուց եկամուտի ատոիճանաբար աճումը, իսկ նրանք, որոնց համար աչխարհում ամեն բան չափվում է ժամու լոմպի չափով և որոնց գործունութիւնը զեկավարվում է քաղաքական տնտեսութեան դմնդակ, բայց անփոփոխելի օրէնքի զօրութեամբ, պիտի նայէին պաշտօնական ֆինանսիստների դիտական ենթադրութիւնների և եզրափակութիւնների վրա հիմնված գործունութեան և նախագիծների վրա յայտնի թերահաւատութեամբ։ Առաջինների պատգամաւորի մարգարէութիւնը (Кавказскій Календарь 1879, 311 եր.) որքան ցանկալի էր և յաջողակիչ, մնաց երազ, որովհետև վերջինների պատգամաւորները որոնք աճուրդ մտան, մի կոպէկ ևս առաւել զոհելու ցանկութիւնը կարող չէին ունենալ։ Մինչև սրա վրա պիտոյ էր զարմանալ։ Տգոյամտութիւն էր կարծել, որ նորոգ կարգադրութեան ժամանակ արքունի գանձարանի եկամուտը կաւելանայ, ինչպէս կարծվում էր, մինչդեռ ձկնորսութիւնը արգելվում է այն ժամանակ, երբ ձուկը գլխաւորապէս մտնում է ձկնորսարանի ջուրը։

Կասկածելի չէ, որ ձկնային կապալառութեան կարգը և պայմանները պահանջում էին յանուն տնտեսական, պետական կարեաց և արդարութեան, արմատական վերանորոգութիւն տեղական պայմանների համեմատ։ Բայց մեծ տարբերութիւն է մի երկրի համար, եթէ մի հին կարգ վերանորոգելու համար մեր մտացական պաշարը և կենտրոնական փոքառութիւնը անկարող են լինում առարկել խնդրատուները յայտնելու։

Նոր կանոնադրութիւն մտցնելու համար եղած սկզբնական հետազոտութեան, գործին կարևոր հաւատի տեղեկութիւնները և վիճակագրական նիւթերի հաւաքելու և նրանց ներդաշնակ զետեղելու ժամանակ՝ բարձի թոզի էին առնված այնպիսի պարագաներ, որոնց վրա գլխաւորապէս ուշադրութիւն դարձնելու անհրաժեշտ կարիք միչտ զգալի էր եղած, եթէ ցանկալի էր որ ձկնց առատութիւնը կարը գեսի ջրչդիում (басейнъ) և սրանով գանձարանի արդիւնքը ոչ միայն հաստատ մնար, այլ ատոիճանաբար մեծանար։ Ընդհակառակը նկատի առնված են այնպիսի աւելորդ պարագաներ ձեւաւորական (формальность) արտայութեամբ, որոնք արհեստական և վաճառականական նկատմամբ մեծ անյարմարութիւնների և դժգոհութեան անդադար աղբիւր լինելով, սահմանափակում են ձկնորսական բանաստէրների արհեստական (промышленный) ազատութիւնը։ Արդեք և սրանց նման տեսակ պարագաները բնականաբար պիտի ճնշէին արքունի գանձարանի եկամուտի աճման վրա,—եկամուտի, որ առանց սրա պիտի անչափ սակաւանար, քանի որ՝ նոր կանոնադրութեան զօրութեամբ, ձկան որսը արգելվում է գարնան գնացքի, ուրեմն ամենամեծ առատութեան ժամանակ։

Եթէ մեր ձկնորսական արհեստի գործը հետազոտվէր առանց նախադրեալ դաղափարի և նախապաչարման, sine ira, et studio, ինչպէս սովորում է, քննվէր կարգ գեսի յատկութիւնները ամենակերպ և ամենաճիչտ երկար աչխատութեամբ, այն ժամանակ գործի ելքը այսպէս լինելու դրական եզրակացութիւնը կարելի էր անել։ Այս գործի ելքը կեսարի խօսքով կարծես լրացաւ. veni, vidi, vici, ի հարկէ թղթով։

Բագու եղած աճուրդները կենդանի ապացոյց են, թէ որքան միամիտ հաւատացեալների հաւատը զօրաւոր էր և կիսապաչտօնական վիճակագիրների եզրափակութիւնը հիմնաւոր։ Այս աճուրդների ժամանակ ստացված գումարը ոչ միայն չէին էր մինչև անգամ հոգաարձական կառավարութեան (опека рыб. промысловъ) ստացված գրդունքից, մինչև անգամ աճուրդ մտնողների թիւը ուրիշ էր։ Բոժի-Պրոմիսլ անուն ձկնորսարանական բաժնի գրված գումարը, ամսի է ասել, 21,000-ից ավել չեղաւ, մինչդեռ այս ձկնորարանը աչխարհս վրա իր հաւասարը և համեմատը չունի. մինչև այժմ այս ձկնարանն էր, որ ծածկում էր կապալառութեան ամենից գումարի (405,000 ռ.) 2/3 մասը և գլխաւոր ծախսերը։ Թողնում եմ յիշել, որ այս աճուրդների ժամանակ նոր կանոնադրութեան խմբագրի և մի ուրիշ ցանկութիւնը անկատար մնաց.—Ռուսաստանից, Ասարխանից ոչ մի ռուս ձկնորսագործ չերեաց, այլ կրկին գլխաւորապէս հայոց ձեռք մնաց այս գործը։ Գլխաւոր բաժինները մնացին հայոց ձեռքը. Ակելով, Ե. Փուղնով. Տէր-Միքայելանց, Լալաչվ և այլն.

Ամրագված ձկնորսական բաժիններից գոյացած գումարը 130,000-ին չը հասաւ,—մի գումար, որից գանձարանը պարտական է մխել Բարձրագոյն հրամանի համեմատ 48,400 ռ, (առանց անակնկալ ծախսերի) նորոգ կազմված ձկնորսական վարչութեան վրա։

Հաստատ կարելի է ասել՝ որ եթէ նոր կարգադրութեան խմբագրութիւնը իր հետազոտութեան ժամանակ ունենար առաւել միչդ վիճակագրական տեղեկութիւնն (տես Кавк. кал, 1879 թ. պ. Շավրովի յօդուածը VII մասը), իմացվէր կուր գետի նեղքին գնացքի (низовье) բնական յատկութիւնները, որի տիրապետողը անչուչտ պիտի իչխէ մեր երկրի ձկնորսական առաւուրի վրա, առանց որ և է ջրապատնէշ (зобойки) անտանելի իչխանութեամբ. համոզվէր, որ գործնականապէս անկարելի է հնարաւոր անել հարևան բաժինաէրների մէջ պաչտանպէս պահանջված միաբանութեան կամ ընկերութեան արգելքը և վերջապէս ժամանվէր, որ Վոլգայի ձկնորսութեան պայմանները կուր գետի ձկնորսարաններին անյարմար և անօգուտ էին,—այն ժամանակ մենք ականատես չէինք լինելու այն անհեթեթութեան, որի ապացոյցը տեսանք Բագուի աճուրդների ժամանակ։

Մի ուրիշ յօդուածով մենք կախատնք քննութեան ենթարկել՝ թէ որքան հիմնաւոր են պ. Շավրովի վիճակագրութեան դատողութիւնը կամ թէ որքան ճշմարտութեան մօտ են այդ տեղեկութիւնները։ Այս համարում ենք մեր պարտքը դէպի մեր հայերը քանի որ տակաւին այս գործը նոցա ձեռքը պիտի գտնվի, ուրեմն քանի որ նոցա հարկաւոր է լուրջ և հատատա կարծիք ու տեղեկութիւն ունենալ այս օգտաւէտ գործը արդարութեամբ և իմաստութեամբ վարելու համար։

Բոժի-Պրոմիսլ Արամեան

Երկար լռութիւնից յետոյ վերջապէս «Լրարար» ամսագիրը պատասխանեց, թէ Վ. Հ. Հայրապետի կարգադրութեամբ յիշեալ գումարով գնվել են արժէթղթեր (ո՛ւմ անունով,—յայտնի չէ) և այդ թղթերի տոկոսով պիտի հիմնվի և կառավարվի Աշակերտի գաւառում մի դպրոց։

Դպրոցի մասին մենք դեռ ոչինչ չը գիտենք, արդեօք գոյութիւն ունի նա, թէ ոչ։ Մեզ միայն յայտնի են Ռուսաստանի արժէթղթերի տոկոսները 17,000 ռուբլին չէ կարող մի այնքան նշանաւոր տոկոս բերել, որով կարելի լինէր հիմնել, պահպանել մի փոքր է շատ օրինաւոր դպրոց։

Եթէ Էջմիածնի գիտաւորութիւնը անկեղծ է, եթէ նա իսկապէս ցանկանում է այդ գումարը իր բարեգործական նպատակի համեմատ գործադրել, մենք խորհուրդ կը տայինք այդ փոգերով գնել թիւրքաց Հայաստանում մի կտոր հող և յատկացնել Աշակերտի գաւառում կազմվելու դպրոցին։

Մենք հաստատ աղբիւրներից գիտենք, որ թիւրքաց Հայաստանում այժմ հողերը ամենաչնչին գներով են վաճառվում։ Մի կողմից անցեալ ձմեռվայ սարսափելի սովը այն աստիճան չքաւորութեան մէջ ձգեց քրդերին, որ նրանք սկսել են իրանց հողերը խիստ ստոր գներով վաճառել, միւս կողմից, քրդերը ըստում են այժմեան դիւանագիտական բանակցութիւնները Հայաստանի մասին, նրանք զգում են, որ իրանց դարը շուտով անցնելու է և այս պատճառով սաստիկ երկիւղի մէջ են։ Նրանք հասկանում են՝ եթէ Հայաստանին որ և իցէ կերպով ազատութիւն կը տրվի, եթէ Հայ մարդը մաՀմետականի հաւասար իրաւունքներ կը ստանայ,—այն ժամանակ քուրդը, յափշտակութիւնով և հարստահարութիւնով ապրող քուրդը, իր նշանակութիւնը կը կորցնէ։

Քրդերի դէրէբէգիները, չէյխերը, ցեղապետները, օգուտ քաղելով թիւրքիայի ներդամնութիւնից, բռնութեամբ ձեռք էին բերել ընդարձակ հողեր, գիւղեր, ագարակներ, արօտատեղիներ, որոնք առաջ պատկանում էին հայերին։ Յամանակը և հնութիւնը դարձրել էին յափշտակված կալուածները նրանց սեպհականութիւն։ Այժմ պատրաստ են բոլորը վաճառել նոյն իսկ հայերին, որոնց ձեռքով ստրկաբար մշակել էին տալիս այդ հողերը, արդիւնքը իրանք էին վայելում, իսկ հայերին թողնում էին սոված։

Այժմ քրդերը հասկանում են, որ այդ բոլոր բարբարոսութիւններին վերջ կը տրվի։ Այսրեսի, երկրագործութեան անընդունակ բուրդը այլ ևս չը պիտի կարողանայ իր հողերից շահվել—և այս պատճառով շտապում են, դեռ Հայաստանում վերանորոգութիւններ չը մնած, իրանց հողերը փոխարինել փողի հետ, փափենալով մի գուցէ նոր օրէնքը, նոր իրաւունքը խլէր նրանց ձեռքից այն, ինչ որ ապօրինի կերպով տիրացել էին։

Մեն մի հայ կապիտալիստ կարող է վերայիշեալ հանգամանքներից օգուտ քաղել։ Բայց մենք դառնում ենք դէպի Լչմիածինը։—Լչմիածինը, եթէ արդարև դիտաւորութիւն ունի պաշկերտոցոց անունով հաւաքված գումարը Նուբարաների բարեգործական նպատակին ծառայեցնել, և ոչ թէ զանազան երևակայական խոստումներով պահել իր գանձարանում,—Լչմիածինը պիտի շտապէ Պաշկերտի գաւառում գնել մի հող և յատկացնել այնտեղ նոր հիմնվելու գպրոցին։

Լչմիածնում այժմ պահված է 17,000 ռուբլի պաշկերտոցոց պատկանող գումարը. այդ գումարով կարելի է գնել մի ընդարձակ երկիր, որ հեռու չէ Պաշկերտի գաւառից։ Մենք ցոյց կը տանք այդ երկիրը. դա Աբաղայի լայնատարած դաշտն է իր ջրաւէտ, արգաւանդ հողերով, խոտաւէտ լեռներով, վերջապէս մի հարուստ երկիր, ուր բնութիւնը ամեն ինչ պատրաստ ունի մարդկային անտեսութեան համար։ Այդ դաշտի վրա մի ժամանակ կային մօտ 500 հայոց գիւղեր, այժմ մնացած է բոլորովին ամայի, թիւրքաց բարբարոսութեան պատճառով գիւղերի հետքերն են մնացել միայն, ամբողջ տարածութիւնը ներկայացնում է մի տխուր անապատ։

Մենք գիտենք, որ այդ դաշտը գնահատված էր 20,000 ռուբլով, իսկ առնող չը լինելու պատճառով, այժմ կարելի է աւելի պակասով գնել։ Պաշկերտոցոց 17,000 ռուբլին մէր կարծիքով բաւական կը լինի։ Թող Լչմիածինը այդ գումարը ուղարկէ սրբ. Ներսէս պատրիարքին, որ նա յանձնէ Կ. Պոլսի «Միացեալ ընկերութեան», այդ ընկերութիւնը, որ արդէն Պաշկերտում գպրոց ունի, պէտք եղած կարգադրութիւնները կանէ յիշեալ դաշտը Պաշկերտի գպրոցի անունով գնելու համար։

Մենք յուսով ենք, որ Լչմիածինը այնքան խոհեմ կը լինի, որ կը հաստատայ այդ առաջարկութեան կարևորութիւնը.—այսպիսով նա մի կողմից կը խրախուսէ նորակազմ ընկերութեանը, որ Թիւրքաց Հայաստանի մանուկների կրթութեան համար մեծ ապագայ է խոստանում, միւս կողմից կապահովէ Պաշկերտի մէջ հիմնված գպրոցի գոյութիւնը մի հարուստ և արդիւնաբեր կալուածքով։ Տեսնենք....

Ց. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«РУССКІЙ КУРЬЕРЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

«Русск. Курьеръ» լրագրի մէջ կարդում ենք հետեւեալ թղթակցութիւնը Զինկովից, Պարտավայի նահանգից։

Ձեր լրագրի մէջ արտատպված էր «Голосъ»-ի մի լուրը այն անբարեկարգութիւնների մասին, որ ծագեցին գիւղական ընկերիչների և Կարմիր Խաչի բաժնի անդամների մէջ, որոնք պատերազմում էին դիմներիսի հետ։ Այդ լուրը վերաբերում էր և այն ազդեցութեանը, որ Վելիկօրուդիշկի վանքի կղերը ունեցան բնակիչների վրա։ Այդ անբարեկարգութիւնները հետեւեալ կերպով կատարվեցան։ Դպիս է վանքը Զինկովի խարաֆիկը մի քանի ձիաբեռների, գիւղական մեքենաների, դատարանների և տասնապետների հետ։ Պատարագից յետոյ խարաֆիկը ժողովրդին քարոզում է։ Իր ճառով նա մեկնեց դեպինիկեցիայի գեղեցիկ նպատակը և հաստատում էր նրանց սանիտարներին չընդդիմանալ։ Յետոյ նա դիմում է կղերին և յանդիմանում է նրանց այն վնասակար ազդեցութեան համար, որ նրանք գործում են ժողովրդի վրա։ Կղերին պատժելու համար խարաֆիկը յայտնեց, որ վանքը խիզոն կը ծախվի։ Գիւղացիները զանգատվում էին, որ սանիտարները իրանց գործածած միջոցներով փչացնում են նրանց հացաստները։ Խարաֆիկը յայտնեց, որ այդ բանը այլ ևս չի կրկնվի, բայց կանայք (բարաները) և կղերը սկսեցին բարձր ձայնով լաց լինել։ Սկսվեցաւ աղմուկ։ Ամբոխը ոգեորվեց։ Մինչև սանիտարները ծիծաղում էին մայրապետի խուցը, ամբոխից մի քանիսը գաղանվեր ձեռք բերին։ Այդ տեղ գոյնը վերջացնելուց յետոյ սանիտարները զանազանի տնեանք ուղևորվեցին, որ փակված էր։ Խարաֆիկը հրամայեց կողպէքը կոտրել։ ամբոխը առաջ եկաւ և յայտնեց, որ չի թոյլ տայ։ Կանայք առաջ եկան և երբ մի ձիաւոր մօտեցաւ դրանը, մի առողջակազմ կին նրան այնպիսի ապտակ տուեց, որ նա գլորվեց դրան առաջը։ Խարաֆիկը հրամայեց յետ կանգնել և փորձեց համոզել ժողովուրդին։ Խոյն սարսափելի աղմուկ բարձրացաւ։ Ձիաւորները երկրորդ անգամ յարձակվեցան դրան վրա, բայց անպտղ. փորձեցին հրդեհաշէջ խողովակի զորձարքել, բայց նրանց այնպես յետ մղեցին, որ խարաֆիկը սարսափած էր յետ փախչել։ Մեծցին զենգարիները տար։ Ամբոխը շտանում էր նոր եկողներով, այնպէս որ վանքի պարիսպների մէջ չէր տեղաւորվում։ Մելիքը և գաւառապետները սարսափած էին ծածկել իրանց նշանները, և որոնց տեսնելով ամբոխը աւելի էլ գայրանում էր։ Կղերը չէ կանչաց կամենում էին գանձերի փակել, որ կարողանան լաւ պատժել «անհաւատներին»։

Խարաֆիկը իր ուղեկիցներով շտապով յետ քաշվեց։ Զայրացած ամբոխը և կղերը նրանց հալածում էին, իսկ նրանցից մէկը, վերցնելով հրդեհաշէջ խողովակը, սկսեց փափենալների մէջքին ջուր ածել։ Այդ ժամանակ կատարեալ փախուստ էր։ Որ կողմը պատահում էր փախչում էին։ Զիաձերի սանձերը այնպէս ամուր էին կապված, մինչև որ նրանց բաց անելը ձիաւորները լաւ ծեծվեցան։ Այդ սխալը անցքը երևի չի մնայ առանց դատաստանական բնութեան։ Կասեմ լուր է տարածված, որ կղերից մի քանիսը կալանաւորված են։

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

—

Օգոստոսի 19

Զարմանալի է ալէքսանդրապոլցոց գործունէութիւնը. շատ խօսում, շատ դատում, բայց ինչ են չնում։ Թողած սոցա անցեալ գործունէութիւնը՝ ներկայս դիտենք։

Ինչպէս յայտնի է՝ Թանգութեան պատճառներից մէկն էլ ապրանքը երկրորդ կամ երրորդ ձեռից գնելն է։ Այս բանը, երևի, հասկացան բոլորն էլ և շատ խօսելուց յետ, հարցը հասաւ մինչև քաղաքիս թաղապետաց խորհուրդը, որը և կանոն հանեց՝ թէ ոչ մի վաճառող իրաւունք չունի մինչև ճաշ որ և է կենտանի պիտոյից վերաբերեալ վաճառ գնել հրապարակի վրա ծախելու համար, այլ ճաշից յետոյ միայն։ Բայց այս կանոնի թէև օգտաւէտ լինելը՝ամենը ոչ գիտէր, երբէք չէր պահվում և քաղաքացին՝ աչքի առաջ տեսնելով զեղծումներ, չէր գանգատում ուր հարկն է, և կանոնը մնաւալ տառ էր մնում։ Վերջապէս թանգութեան նուազելու տեղ աւելի սաստկանալը սարսեց թաղապետներին խորհել. կանոնին հակող վեց հոգի Ընտրեցին մի անուով, բայց կարելի է արդեօք յուսալ, թէ արժանութիւն կը լինի դրանով, մինչև քաղաքացին համարեա դիտմամբ պատահ ժամանակ է փնտրում հակառակ գործելու։ Մրգի ժամանակ է և մրգավաճառները լցվում են բազար, առնողներին նեղացնում (խօսքերով), ծախողներին ճաշից յետոյ լինելիք վաճառով յուսացնում և եթէ հակողներն հեռի եղան՝ առնում ինչպէս պատահի (թանգ կառնենք՝ թանգ կը ծախենք կը)։ Դարի, ածուխ և այլ մթերներ ծախողները իս պակաս չեն մնում. հրապարակի այս գործունէութիւնը քիչ չէր հրապարակից դուրս, քաղաքի մէջ և ճանապարհների վրա ևս, ինչպէս պատահի, առնում են և չեն թողում ապրանքը հրապարակ իսկ հասնի։ Հարցնում ես. եղբայր, ինչու համար ես այդպէս անում, չէ որ ինչքան էլ առնելու լինեն՝ շատը կը մնայ և ճաշից յետ ուզած գնովդ կարող կը լինես առնել, որով թէ դու կրկին կը չանվես և թէ ժամանակին կը լինի։ «Ինչի, կը պատասխանէ մեր վաճառողը. հոգիդդ կելնի կոր քանիսվ կոպէկ էլ մեզի քեսր տար, յանին ինչ մեզիկն առնիք. մենք էլ էտով կապրենք կրա։ Աղդ այսպիսին ինչպէս հասկանես, թէ ամենքն էլ քեզ պէս ապրել են ուզում, թէ դու մրգ ես ուզում թանգ ծախել՝ միայն էլ ալիւրը կը կանենայ, երրորդը աթարը՝ ածուխը, իւղը, գարին, վերջը ամեն ինչ։

Այս ամենն անում էք, պարոններ, և դեռ յոյս էլ ունէք թէ երբ և իցէ արժանութիւն կը լինի, վերակացու ընտրելով կամ զանազան կանոններ դնելով։

Չէ որ վերակացուք ես ձեզնից են և խաթեր համար բաներ կանեն. բայց յայտնէք ամեն տեղ լինել չեն կարող, մանաւանդ գործատէր մարդիկ են, այս թանգ տարին նոքա ևս պիտի ապրեն, ուրեմն և իրանց գործը թողած միշտ ձեր կանոնին հակել չեն կարող։

Կանոնը դեռ նոր դրած՝ այսքան զեղծումներ են լինում, վաղը, միւս օր առաւել վատ չի լինի. ինչու չէք բոլորդ էլ վերհասաւ լինում, ինչու վերակացուաց թուլութիւնը կամ մէկի միւսի անկանոնութիւնը տեսնելիս չէք խօսում—չէք պահանջում որանցից հարկէ բաւականութիւն և պահել յանցաւորներ։ Վերջապէս, եղբարք այլ քանի դպապետներ, ձեզ խորհուրդս այս է, ձեր չարը փնտռեցէք և այլոցն ևս մի մտանար։ Մանաւանդ, արհեստաւորներ, արհեստներդ թողած մի դիմէք մանրավաճառութեան կամ մրգավաճառութեան, որի հետեւանքը բոլորիդ էլ վնաս է և առուտուրի պակասութիւնը։ Մի քիչ մտածեցէք, այդչափ վաճառորներից կարող կը լինին բաւական լինել իրը գնող այս գաւառի բնակիչները։ Պատերազմն անցաւ, սպասող քիչ կայ և վաճառող քիչ է պէտք։ Բայց թէ ասրել էք ուզում, ոչ թէ ուրիշի վրա բեռ լինելով պիտի ապրիք, այլ ձեր աշխատանքի վարձն առնելով։ Բայց երբ չէք աշխատում՝ աւելորդ չէ՝ ձեր կեանքը։

Կանոնը չեղած ժամանակ էլ վատ էիք. կանոնն եղաւ՝ կրկին նոյն էք։ Խելքի եկէք, կանոնաւոր գործի ձեռք զարկէք։

Ց. Գ.

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՑԻՑ

—

Օգոստոսի 19

Ուղարկելով ձեզ քանի և չորս Ռ., որը հանգանակութեամբ ժողովեցի այստեղ յոգնաւոր վաճառորդների, խնարհաբար խնդրեմ հասցնել ուր հարկն է և տպել ձեր պատուական լրագրի էջերում նուիրատուների անունները։

В. Алексапольская 3 р., Զ. Աղդրիասեան 3 р., Շահրիար Մելիք-Փարսադանեան 3 р., А. Маковкій 1 р., А. 1 р., Լ. 3 р., Խ. 2 р., Մ. 2 р., Б. 1 р., К. 50 կ., Х. 50 կ., Кондратьевъ 1 р., Ոմն 1 р., Е. Р. 2 р., Ընդամենը 24 р., փոսի ծախսը ինձ վրա հաշվելով։

Զարմայր Աղդրիասեան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Գանձակ, 24 օգոստոսի

Երբ որ և իցէ լրագրում երևում է Գանձակից մի անստորագիր կամ միայն տառերով ստորագրված նամակ, վերաբերվող հասարակական գործերի և սրանց ղեկավարներին, այս վերջինները հետաքրքրվում են ոչ թէ նամակի բովանդակութեամբ և դարձնում ուշադրութիւն այն ճշմարիտ նկատողութիւնների և պահանջների վրա, որոնք արտայայտված են նամակի մէջ, այլ նրանք զբաղվում են միայն նրանով, որ իմանան վերև յիշված տեսակ նամակի գրողի ով լինելը, կազմում են անձինն և երևակայական կարծիքներ և դատողութիւններ այս կամ այն պարոնի մասին, այն առողջ լոգիկայի հիման վրա, որ նամակը կրում է այս կամ այն տառերի ստորագրութիւնը։

Ասածս հաստատելու համար պիտի ասեմ, որ այն օրից երբ «Մշակ» լրագրի 131 № տարվեցաւ այստեղ, ես դաւայ հեղինակ այն նամակի, որ վերաբերում էր Գանձակում կազմված «Ցորնի կոմիտեանին» և սրա անդամների գործունէութեանը այն հիման վրա, որ նամակի տակի տառերը իմ անուան և ազգանուան գլխատառերն են, Աւելորդ եմ համարում երկար խօսել այն մասին, թէ որքան հիմնաւոր և լոգիկական է մի քանի պարոնների այս տեսակ հոդվածին կարծիքը և եզրակացութիւնը և որքան ծիծաղելի են նոցա խրախմունքը։ Այլ կասեմ այսքանը, որ թող նոքա չը զրաւվեն որ և իցէ նամակագրի անունով, այլ առանձին ուշադրութիւն դարձնեն գործի էութեան և նշանակութեան վրա, ախտանեն նրանց առաջադիմութեան վրա և պարտ ու պատշաճ կատարելու մասին։ Խնդրում եմ ձեզ, պ. խմբագիր, ճշմարտութիւնը լոյս հանելու, որով կը պարզվի այն պարոնների իմացական մթնոլորտը, որ մոլորված է Ա. Հ. տառերով, հրապարակաւ յայտնէք ձեր լրագրի մէջոցով, որ այն Ա. Հ. ստորագրված նամակի հեղինակը ես չեմ.

Արտ. Համափիւռ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Եղանակը թիֆլիսում կրկին տաքացաւ։ Աշունը խոստանում է բարեխառն լինել։

—

«Русскій Инвалидъ» լրագիրը հաղորդում է որ Ղարսի նահանգի Ադրահանի գաւառապետ, յայտնի Բազիրիչին հրաժարված է պետական ծառայութիւնից։

—

«Մշակին» կարելի է գրվել սեպտեմբեր ամսից 4 ամսով, հոկտեմբերից 3 ամսով, նոյեմբերից 2 ամսով և դեկտեմբերից 1 ամսով, մինչև յանվար ամիս եկող 1881 թվի։

÷

ԴԻԼԻՋԱՆում հաղորդում են՝ Զարիաշ գիւղի անտառի պուխովչիկը (անտառապահի օգնականը) հրացան արձակելով, վիրաւորում է երկու սպասող վրացիների։ Այս վարմունքի պատճառը մի